ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2091 - Ա **06 ապրիլի 2009թ.**

Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ Հ. 64 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԱՔՍԻ ԳԱՐԵԳԻՆԻ ՊՐՈԽՅԱՆԻ, ՆԱՐԻՆԵ ՄԱՆՎԵԼԻ ՊՐԽՈՅԱՆԻ, ՍԻՐԱՆՈՒՇ ՄԱՆՎԵԼԻ ՊՐԽՈՅԱՆԻ, ՌՈՒԶԱՆՆԱ ՄԱՆՎԵԼԻ ՓՐԽՈՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արաքսի Գարեգինի Պրոխյանի (ծնված 15.10.1930թ.), Նարինե Մանվելի Պրխոյանի (ծնված 29.03.1964թ.), Սիրանուշ Մանվելի Պրխոյանի (ծնված 10.07.1955թ.), Ռուզաննա Մանվելի Փրխոյանի (ծնված 10.08.1960թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Մ. Խորենացու փողոցի 3-րդ նրբանցքի հ.64 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 403.47քմ, որից 368.2քմ մակերեսով հողամասն Արաքսի Գարեգինի Պրոխյանին, Նարինե Մանվելի Պրոխյանին, Սիրանուշ Մանվելի Պրոխյանին, Ռուզաննա Մանվելի Փրխոյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 35.27քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1973 թվականը, ՀՀ վերաքննիչ ատյանի դատարանի 16.10.2008թ. քաղաքացիական գործով կայացված վճիռը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման 23.10.2008թ. հ.5721ա, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 21.01.2009թ. հ.20/2-Ե/1 գրությունները, Երևանի քաղաքապետարանի <<Քաղաքաշինություն>> ՊՓԲԸ-ի 11.11.2008թ. հ.20-Ել-1151ա եզրակացությունը, համաձայն որի Մ. Խորենացու փողոցի 3-րդ նրբանցքի հ.64 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Մ. Խորենացու փողոցի 3-րդ նրբանցքի հ.64 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Արաքսի Գարեգինի Պրոխյանի, Նարինե Մանվելի Պրխոյանի, Սիրանուշ Մանվելի Պրխոյանի, Ռուզաննա Մանվելի Փրխոյանի հողօգտագործման

իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 368.2քմ մակերեսով հողամասին կից 35.27քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 35.27քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Մ. Խորենացու փողոցի 3-րդ նրբանցքի հ.64 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Մ. Խորենացու փողոցի 3-րդ նրբանցքի հ.64 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Արաքսի Գարեգինի Պրոխյանի, Նարինե Մանվելի Պրխոյանի, Սիրանուշ Մանվելի Պրխոյանի, Ռուզաննա Մանվելի Փրխոյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Կենտրոն թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ